ՅՈՒԼԻՍ ԱՄՍԱԳՐՈՅ ՀԱՆԵԼՈՒԿԱՑ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ.

1.

Կոյր մրտրն է խիստ անպիտան,
Իրրեւ մեռեալ դի անկենդան,
Որ միշտ կարօտ մնայ լուսին
Յիւր յամառեալ սրտի ի տան։

2.

Անհիմն փոքրիկ սիրտն է տուն,
Յարում բնակին խորհուրդ անհուն.
Բայց ականջօք ի նա լնուն,
Եւ Եւանեն ի բերանոյն։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Մի քանի տեղերէն գանգատներ լսուելով, թէ՝ մեր սիրելի ազգայիններից շատերը Աբարատին բաժանորդ գրուելէն զկնի, ցարդ և ոչ միոյ ամսուանը սուացած չեն, կը փութամք ծանուցանել, զի՝ որովհետև Խմբագրութիւնը արդէն իւրաքանչիւր ամիս որոշեալ թուերով յանուն Կոնսիստորիայից և Հ. Կառավարութեանց՝ Աբարատ ամսագրիներէն առաքած է ցանկացողաց բաժանելոյ աղատաւ, ուստի բաժանորդք՝ իւրեանց սուորագրութիւնքը ընդունողաց միջոցաւ պէտք է սատանան իւրեանց բաժինները Կոնսիստորիաներէն և Հոգևոր Կառավարութիւններէն։

Իսկ եթէ կան սակաւին այնպիսիք, որք բաժանորդ և փոքը վճարած զոլով, և ոչ մի օրինակ սուացած չեն իւրաքանչիւր ամիսէն, թող բարեհաճին յայտնել խմբագրութեանս՝ կարևոր եղածը շուտափոյթ անօրինելոյ համար։

Դա և երբ Կոնսիստորիաներէն և Հ. Կառավարութիւններէն բաժանորդաց ընդհանուր ցուցակները կ'ընդունիմք, ինչպէս շատ ժամանակ չէ՝ մի քանիներէն սուացած եմք, իւրաքանչիւր բաժանորդին՝ իւր անուանը կ'ուղղեմք Աբարատները բաց 'ի Հոգևորական դասէն։ Իսկ աշխարհականներէն ևս ցանկացողք կարեն Կոնսիստորիայից և Հ. Կառավարութեանց միջոցաւ սատանալ իւրեանց բաժինքը, երբ նոցա միջոցաւ կամ առանձին գրութեամբք կը յայտնեն խմբագրութեանս։

Այս առթիւ արժան կը համարիմք խնդրել յատկապէս Կոնսիստորիաներէն և Հ. Կառավարութիւններէն ևս, որ կարելին փութով և բաղմարդիւն եռանդով առաջելով բաժանորդաց սուորագրութիւնքը, և ամբողջ ցուցակները կազմած հասուցանել խմբագրութեան՝ միջոցաւ Մինսդի. և յանուն իւրեանց յղեալ իւրաքանչիւր ամսոյ թերթերը 'ի ժամանակին՝ հաւատարիմ գործակալաց ձեռքով յանձնել բաժանորդաց. որպէս զի թէ դժգոհութեանց և գանգատանաց տեղիք չը մնան, թէ՝ խմբագրութեանս բոլոր ձիգերը և բարեխանձ նպատակները, և թէ՝ բաժանորդաց՝ մեր սիրելի ազգայնոց ուսումնասէր և հետաքրքիր եռանդները՝ փոխադարձաբար պասկուին։

Խմբագրութիւնը կը փութայ ծանուցանել այնոցիկ, որք որպիսի և իցէ գրութիւն թէ կամենան ուղղել յանուն Խմբագրութեանս, Հ. ասցէին ճակատը չը գրեն ամենեւին Ч-ԵՐԵԶ ԵՐԵՎԱՆ, (Черезъ Ереванъ) այլ ուղղակի Վ-ԱՌԱՐԱՏԱՄԷ (Въ Вагаршапатъ) որովհետև Սուրհանդակատունն ասա 'ի Վաղարշապատ զոլով, կրկին սուրհանդակատան վարձ կը պահանջեն 'ի սատացողէն։

Դոյնպէս վարուիլ պէտք է նա և Պաշտօնական և առանձին բարեկամական գրութեանց Հ. ասցէից համար։

Իսկ 'ի հակառակ դէպս սատացեալ թղթերն՝ հոկտ. 1-էն սկսած յետոյ կը դարձուցանին առ առաքողս։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.